ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՏԱՐԲԵՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ Վ.ՕՎՅԱՆԻ «ԼԵՌՆԱԿԵՐՏ» ԵՐԿՈՒՄ

Նունե ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝*փոխաբերություն, փոխանունություն, համընկնում, երգիծանք, դրսևորում, հեգնել, ծաղրել, քննադատել, մերկացնել, արտահայտել*

Ключевые слова: *метафора, омонимы, совпадение, сатира, демонстрация, насмехаться, высмеивать, критиковать, разоблачать, выражать*

Keywords: *metaphor, homonyms, coincidence, satire, demonstration, ridicule, deride, criticize, expose, express*

Н.Хачатрян
Метафора и ее различные проявления в произведении В.Овяна «Лернакерт»

В этой статье мы рассматриваем метафоры и ее различные проявления, такие как омонимы, в произведении В.Овяна «Лернакерт».

Автор, используя различные метафоры, представляет Лернакерт 20-х годов 20-го века, выражая свое отрицательное и ироническое отношение к политической обстановке, господствующей в Лернакерте, по отношению к общественной нравственности.

Рассматриваем такие метафоры, в которых характер человека приписывается предметам, животным, явления природы - человеку и наоборот.

Автор создал линию таких примеров, которые способны привлечь внимание читателя к той черте, которая интересует его в данный момент.

N.Khachatryan,
Metaphor and its various Manifestations in the Work “Lernakert” by V.Ovyan

In this article we look at the metaphor and its various manifestations, such as homonyms, in the work "Lernakert" by V. Ovyan.

The author using various metaphors, represents Lernakert of 20-es of the 20th century, expressing his negative and ironic attitude to the political situation prevailing in Lernakert , relation to public morality.

We regard such a metaphor in which a person's character is attributed to objects, animals, natural phenomena- to man and vice versa.

The author has created a line of examples, which are able to attract the reader's attention to the feature that interests him at the moment.

Հոդվածում քննում ենք փոխաբերություններ և նրա տարբեր դրսևորումները՝ փոխանմանությունը , Վ.Օվյանի "Լեռնակերտ" երկում:

Հեղինակը բազմաբնույթ փոխաբերությունների, գործածումով ներկայացնում է 20-րդ դարի 20-ական թվականների Լեռնակերտ, իր ժխտողական, ծաղրական վերաբերմունքն արտահայտում Լեռնակերտում տիրող քաղաքական իրավիճակի, հասարակական բարքերի նկատմամբ:

Վեր ենք լուծում այնպիսի փոխաբերություններ, որոնցում անձի հատկանիշ է վերագրվում առարկաներին, կենդանիների, բնության երևույթների հատկանիշները անձանց և հակառակը:

Հեղինակը ստեղծել է համընկումների այնպիսի օրինակներ, որոնցով կարողանում է ընթերցողի ուշադրությունը գրավել այն հատկանիշի վրա, որը տվյալ պահին հետաքրքրում է իրեն:

Վ. Օվյանի մեծ վարպետության մասին են վկայում նրա՝ <<Լեռնակերտ>> երկում գործածված փոխաբերությունները: Փոխաբերությամբ է դրսևորվում նրա պատկերների մեծ մասը, որը ավելի ակնառու է դարձնում նկարագրվող անձի, առարկայի հատկանիշը, հեղինակի միտումը: Հարուստ ու բազմաբնույթ են մանավանդ երգիծական բնույթի փոխաբերությունները:

Փոխաբերությունը այնպիսի միջոց է, որի դեպքում երկու առարկաների ներքին կամ արտաքին նմանության հիման վրա գործածվում է մի այլ բառ: Եվ ամեն մի բառ այլ բառերի հետ ունեցած կապակցություններում է յուրահատուկ իմաստային երանգ ստանում և ոճական նշանակություն ունենում: <<Փաստորեն փոխաբերությունը մի առարկայի կամ երևույթի

հատկանիշի տարածումն է մեկ այլ առարկայի վրա,որը չունի նման հատկանիշ,կամ խոսքում այնպիսի հասկացության արտահայտումը,որպիսին բառը չունի խոսքից դուրս>>[1]:

Փոխաբերությունները լինում են լեզվական և անհատական: Հատկապես երգիծական նպատակով գործածվում են անհատական փոխաբերությունները: Հեղինակը դրանց միջոցով պատկերում է 20-ական թվականների Լեռնակերտը, իր քննադատական, ծաղրական վերաբերմունքն է արտահայտում այդ ժամանակաշրջանում Լեռնակերտում տիրող քաղաքական իրավիճակի, հասարակական բարքերի նկատմամբ:

Վ. Օվյանի ստեղծած փոխաբերությունները մի նոր, անսպասելի հատկանիշ, երանգ են շեշտում ներկայացվող առարկայի ու երևույթի մեջ:

Փոխաբերությունների գործածումով արտահայտում է իր ժխտողական վերաբերմունքը լեռնակերտցու, տվյալ գործչի, հերոսի գործունեության, մտածողության, էության նկատմամբ: Հաճախ ընթերցողի հակակրանքը ուժեղանում է նրանց արտաքինի ծիծաղելի նկարագրությամբ: Նկարագրելով արտաքինը՝ բացահայտում է էությունը: Օրինակ՝ <<Պրիստավը ձիգ տված **մաստակ** էր, մանր աչքեր ուներ, երկար ծնոտ, նեղ ճակատ>> (2, 372): Կամ՝ պատկերի առարկայականությունը ցայտուն է հետևյալ փոխաբերությունում,որում իր ծաղրն է արտահայտում օտարերկրացի ոստիկանի անտարբերության նկատմամբ. <<Կոլոտ մարդ է գորոդովոյ Անտոնը՝ գլուխը հսկա մի **դդում**, այդ հսկա դդումի վրա մի զույգ փոքրիկ անցքեր, որոնք մահկանացուների համար ծառայում են որպես աչքեր>> (2, 375): Ընդգծված բառերը իրենց բառարանային արժեքով դրական կամ բացասական իմաստ չեն արտահայտում:Սակայն համատեքստում,մտնելով տարբեր կապակցությունների մեջ,ձեռք են բերում բացասական իմաստ:

<<Լեռնակերտ>> երկում փոխաբերական իմաստով հաճախակի են գործածվում կենդանիների անվանումներ:

Պետական պաշտոնյաներին կոչում է *գայլ, խոզ, օձ*, և հակակրանք առաջացնող այլ կենդանիների անվանումներով՝ դրանով իսկ խարազանելով այդ գործիչների հասարակական արատավոր գործունեությունը: Օրինակ՝ <<Գեներալ Դենստերվիչը հին *գայլ* է..>> (2, 383): Կամ՝ կերպարներից մեկի խոսքերով արտահայտում է իր ծաղրական վերաբերմունքը. <<Խմբապետ Խորենը *խոզ* է, միստեր Սենգիստոնը *աղվես* է, պարոն Սիլվեստը չորսաչքանի *օձ* է>> (2, 423):

Գայլ, խոզ, աղվես, օձ բառերի փոխաբերական գործածությամբ ավելի ցայտուն է արտահայտում *ագահ, խորամանկ, նենգ, ստոր* իմաստները:

Վ. Օվյանը ստեղծել է բազմաբնույթ փոխաբերություններ.[2]

1. Անձի հատկանիշի վերագրումը առարկաներին և հակառակը:

Օգտագործելով մի շարք բառեր, որոնց արտահայտած գործողությունները հատուկ են մարդկանց, գրողը դրանք վերագրում է առարկաների: Օրինակ. <<Օրվա այդ ժամին է, որ **հառաչում, հեկեկում, մղկտում** է Ուստա Կարոյի **դուդուկը** >> (2, 387): **Հառաչել, հեկեկալ, մղկտալ** բառերը արտահայտչական երանգ ունեն և գործածվելով տվյալ համատեքստում՝ խոսքին հաղորդում են շինծու վերամբարձություն և ձեռք բերում հեգնական իմաստ: Այս օրինակով հեղինակն իր ծաղրն է ուղղում ժամանակի արհեստի ու արվեստի մարդկանց ցուցամոլությունների, արհեստականության դեմ: Կամ՝ հեգնում է հերոսի անհավասարակշռությունը, կատաղությունը. <<Քրտինքը հոսում է դեմքով, աչքերը բներում պար են գալիս >> (2, 423):

Մի շարք փոխաբերությունների բառիմաստների միջև ընդհանրության եզրեր կան, այսինքն՝ փոխաբերաբար գործածված բառերի ուղղակի նշանակությունները փոխադարձ կապի մեջ են:Այսպես, **քսակ** բառը զուգորդվում է **տոզել, ծանրանալ** բառերի հետ: <<Քսակի հետ *տոզեց* ու

[1] .Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն,Երևան,2000թ.,էջ164:

2 Վ.Օվյան,Լեռների լեգենդը,Երևան,2006թ.:

ծանրացավ նաև պարոն Պահլևունին>> (2, 394):Այս փոխաբերությամբ պարսավում է<<պետության մեծամեծի>>, թալանչի պարոն Պահլևունու ագահությունը:

Ոչնչացնող ծաղրի են ենթարկվում այդ ժամանակաշրջանում տիրող կուսակցությունների գաղափարախոսությունը, փոփոխականությունը: Այսպես է հեգնում դրա անդամներից մեկի անսկզբունքայնությունը. <<Գալիֆե Գուգուշը, որի գլուխը ոչ մի մատերիա էլ չի մտնում, երկու բաժակից հետո *փափկում, մոմ է դառնում*, բոլորին նայում քաղցր աչքով ու հերթով բոլորի ցավը տանում>> (2, 386): Այսպիսի փոխաբերությունները ստեղծվում են իրողությունների ազդեցությամբ ծագող տպավորությունների հիման վրա:

2.Իրային առարկաների հատկանիշի վերագրում ոչ իրային առարկաներին և հակառակը:

Կերպարի անզսպվածությունն ու տգիտությունն է երգիծում հետևյալ փոխաբերությամբ. <<Եվ Լեռնակերտի ցուրտ երկնքում, ձյան փաթիլների ու սանձարձակ քամու հետ *գլուխկոնծի է տալիս* ցնդած Խաբարդանի խեղդված ձայնը>> (2, 392): Այստեղ կոմիկականը հիմնված է **գլուխկոնծի է տալիս**, **ձայնը** բառերի զուգակցման վրա,որի անտրամաբանական լինելը ակնհայտ է:Կամ՝ << Նրա ձայնը պատռեց կեսօրվա լռությունը>> (2, 401):

3. Կենդանիների հատկանիշի վերագրումը անձանց:

Հեղինակը արհամարհանքով է խոսում մի շարք տեղաբնակների մասին, ծաղրում նրանց հոգևոր խեղճությունն ու աղքատամտությունը:Երգիծական կերպարի՝ Գալիֆե Գուգուշի նկատմամբ արգահատանքը ավելի տպավորիչ դարձնելու համար նրան ներկայացրել է իր մասին իր իսկ պատկերացումով.<<Եվ ես, անապատում սատկած ճերմակ զորավոր գորտս,մինչև հիմա այդ չեմ հասկացել...թե սրանից հետո բաղնիս մտնես, քեզանից մի կոպեկ կվերցնեմ, Նալբանդ Աթունի շան կողքին պպզեմ ու մեռել լողացնող Մանգասարի վրեն *հայհմ*>> (2, 456):

Աշխույժ ոճով նկարագրում է դուքան Սեդրակի <<աքլոր>> ցուցադրելու պատկերը. <<Սե դրակին թվաց, թե գավառապետը կյանքում աքլոր չի տեսել, թևերը թափահարեց, տեղում պտույտ տվեց և ապա ցատկեց, կանգնեց թթենու տակ ընկած դատարկ տակառին, վիզը ձգեց ու *ծղրտաց* աքլորավարի >> (2, 373)

4. Բնության կամ այլ երևույթների հատկանիշները վերագրվում են անձանց.

<<Խանանդա Շաշան ... դափը դրեց ականջին ու **կլկլացրեց** մի ուրիշ երգ>> (2, 396):

Մեծ հմտությամբ են կառուցված այն փոխաբերությունները, որոնցում հաճախ փոխաբերաբար գործածվում են բայեր: Խոսքին պատկերավորություն է հաղորդում ամենասովորական, ինքնին արտահայտչության երանգ չունեցող բառերի միջոցով: Այսպես է հեգնում բնակիչների տգիտությունը, Դուքան Սեդրակի տհաստությունը. <<Պլատֆորմը Դուքան Սեդրակի գանգի մեջ չտեղավորվեց, մտքում մի քանի անգամ կրկնեց. <<պլատֆորմ, պլատֆորմ, պլատֆորմ>>, անծանոթ բառը մտքում *խախալեց, մաղեց, ծամծմեց* ու բացատրեց>>(2, 459):

Վ.Օվյանին հատուկ է նախադասության անդամների իմաստային անհամատեղելիությունից բխող իրավիճակների ստեղծումը,որում դեր ունեն տարբեր բառերի կամ բառերի տարբեր իմաստների անսպասելի զուգորդումները:

Ծաղրում է Լեռնակերտի <<անփոխարինելի թամադա>> Մուշեղ Չանչախովի չանչախությունը, պերճախոսությունը. <<Մուշեղ Չանչախովը աշխատում է խոսքը *համեմել* նոր բառերով և փույթ չէ, թե ինչ են ներկայացնում այդ բառերն իրենցից>> (2, 387):

Շատ են հատկապես գոյականով արտահայտված փոխաբերությունները: Հեղինակը հեգնական վերաբերմունք ունի լեռնակերտցի սին գրագետի՝ << Պադալ Մարկոսովիչի>> նկատմամբ . <<Մեր Պադալ Մարկոսովիչի գլուխը գլուխ չի է,- ասում է,- գլուխ չի, **քաղաքային գրադարան** է, ինչ ուզես՝ կգտնես >>(2, 472): Կամ՝ Մանասի **սեխի** ներսում հետաքրքիր մի միտք ծագեց: Այն միտքը, որ արվեստի իսկական գործիչներ չկան, եղածն էլ միջակություն են, ընդօրինակողներ ընդամենը,արտահայտում է այսպիսի օրինակով. <<Խանանդա Շաշան մի քիչ Սայաթ-Նովա է, մի քիչ Միսկին Բուրջի, մի քիչ Հաֆեզ, մի քիչ էլ Օմար Խայամ>> (2, 396):

Հաճախ,մանավանդ հերոսների խոսքում, գործածում է բարբառային, օտար բառեր. Նման փոխաբերությունները տեղին են, ավելի պատկերավոր և բնութագրական: Օրինակ՝ <<Պաժառնի

Վաղոն, Փոստի Մադաթի վկայությամբ, **հրդեհների ցիկլոպեդիա** է, իսկ Դուքան Սեդրակի չարախոսությամբ՝ *պաժառնի շլանգ*>> (2, 476):

Վ. Օվյանը ստեղծել է նաև ծավալուն փոխաբերություններ, որոնք ավելի տեսանելի են դարձնում բացահայտվող առարկան, երևույթը: Հեգնում, ոչնչացնում է Լեռնակերտի անմիտ <<նշանավոր>> գործիչներին. <<Սրանք այն փայլուն արբանյակներն են, որոնք նույնիսկ իրենց փայլը կորցնելուց հետո շարունակում են պտտվել այդ մտքի կենտրոնի շուրջը և սնվել նրա ճառագայթներից>> (2, 369): Կամ՝ <<Այս նշանավոր եռյակին հետևում են ուրիշ նշանավոր աննշան առևտրականներ, որոնք չնայած խոշոր դեմքեր չեն, բայց էլի դեմքեր են, կամ ինչպես Նալբանդ Աթունը կասեր՝ ծմակում գայլ չեղած տեղը՝ աղվեսն էլ է գազան կոչվում>> (2, 418):

Հաճախ փոխաբերությունը որոշակի հարաբերությունների մեջ է մտնում մի քանի դարձույթների հետ, որն էլ դառնում է հենց փոխաբերության ձևավորման միջոց: Հեղինակի երկում հանդիպում ենք չափազանցության հետ զուգակցված փոխաբերությունների: Հետևյալ օրինակում հեգնում է << դարդոտված Շաշայի>> թուլությունը գեղեցիկ սեռի նկատմամբ. <<Շաշայի դարդը թափես անտակ ծովը, ծովը կցամաքի, վարար գետի բերանը տաս, գետը կծովանա>> (2, 387): Կամ՝ լեռնակերտցի աժդահա Պողոսին ներկայացնում է այսպես. <<Պողոսի բռունցքները ծանրացան, դարձան կողքից կախված փթանոցներ, հոնքերը բարդ-բարդ կուտակվեցին և արյունը եռաց>> (2,424):

Բերենք հակադրության հիմքի վրա ստեղծված օրինակ. <<Տկլոր, անտուն, անոթի, բայց իր մերկությամբ բախտավոր, իր գժությամբ երջանիկ, իր հիմարությամբ խելոք, իր դժբախտությամբ ուրախ Ատանը հարկ չհամարեց հայհոյել շաշված ֆայտոնչի Մնացական Դանդարովին ու դիվոտված Աղամին՝ խելագար-խելագար ծիծաղեց ու ոռնաց>> (2, 395):

Փոխաբերությանը, որպես պատկերավորման միջոցի, բնորոշ է անձնավորումը, երբ առարկաներին, երևույթներին վերագրվում է մարդկային այս կամ այն հատկանիշը: Օրինակ՝ <<…Լեռնակերտը գլուխը դրել զով անտառի ծոցում և հանգիստ ու համաչափ ննջում էր >> (2, 456): <<Թող վարժապետ Սիմոնը պնդի, թե նրա մեջ քնել է հայրենասերի խիղճը և արթնացել խռովարարի ոգին>> (2, 432):

Վ. Օվյանի ստեղծած պատկերների մեծ մասի հիմքը դարձվածքներն են, թևավոր խոսքերը, որոնք, լինելով ժողովրդի լեզվամտածողության արտահայտություններ, վառ կերպով ցուցադրում են ժողովրդի ոգին, ինքնատիպ մտածողության յուրահատկությունները: Հեղինակի երկի լեզուն այդ իրողությունների առատության շնորհիվ տոգորված է ժողովրդական կենդանի մտածողության շնչով: Նրա գործածած դարձվածքները, թևավոր խոսքերը հիմնականում բանավոր խոսակցության լեզվին բնորոշ կապակցություններ են:

Այսպիսի արտահայտություններով հարուստ է թե հեղինակային, թե հերոսների խոսքը:

Պատկերում ու հեգնում է աշխատավոր խավի ներկայացուցիչներին, վաճառականներին, վարսավիրներին,նրանց վարքի,կենցաղի,բնավորության ոչ վնասակար,բայց ծիծաղելի կողմերը: Բերենք օրինակներ. <<Խանանդա Շաշան դափը գրկած **մրափ մտավ** ուռենու տակ >> (2, 388): <<Հենց որ ցրտերն ընկնում են, էդ անունավոր լեռնակերտցիները ցրտից խեղճանում, **արջաքուն են մտնում** >> (2, 389): Այսպիսի կառույցները գործածված են իրենց ողջ բազմազանությամբ ու հարստությամբ: Նրա լեզուն աչքի է ընկնում ժողովրդական խոսքին բնորոշ զանազան խոսքային կառույցների ու կայուն կապակցությունների օգտագործմամբ: Ինչպես՝ <<Պոչները քաշել>> (2, 389), <<աչքի պոչով նայել>> (2, 373), <<էշի պոզեր>> (2, 443), <<էն աշխարհը գնացած, ետ եկած>> <<դեմ անել ականջը>>(2, 460), <<իր յուղի մեջ տապակվել>> (2, 407):

<<Շան տղան բեղերը սրած եկավ, գլուխը մի պարկ արյուն առած եկավ>> (2, 393): <<Լեզուն պահեց ատամների տակ, չէր ուզում ճանապարհվելուց առաջ բոլոր կամուրջները վառել>> (2, 453): Կամ՝ <<Օրիորդ Բարիշկան ոչ միայն նրան չարժանացրեց իր մեծ մի ժպիտին, այլև չնայեց՝ տեսնի՝ շո՞ւն է հաչում, թե՞ կատու է կլավում>> (2, 395): <<Աղամի հոգում նոր նինջ մտած դևերն արթնացան>> (2, 396):

Ոչնչացնող ծաղրի են ենթարկվում սուտ ու կեղծ աղգային հերոսները, պաշտոնյան, նրանց վախկոտությունն ու անսկզբունքայնությունը. <<Իսկ քո էդ ազգային հերոսները ինչո՞ւ մկան ծակին հազար թուման են տալիս>> (2, 423):

Պատկերի սաստկացման և ուժգնացման նպատակով օգտագործում է խոսակցական, բարբառային դարձվածքներ, խոսքեր : Սրանք ծառայում են իրենց նպատակին, պարզ են, արտահայտիչ, ցայտուն: Այսպես. <<թոզդ քամուն տան>> (2, 453), <<քսի-փսի անում>> (2, 448), << քու շառը կտրվի>> (2, 451), <<մազերդ բիզ-բիզ կկանգնեն>> (2, 417):

Վ. Օվյանը ունի այնպիսի փոխաբերություններ, որոնք այնքան դիպուկ են, որ աֆորիզմի դեր են կատարում: Օրինակ՝ <<Եվրոպացու ուժը ավելի շատ խորամանկության մեջ է, քան զենքի>> (2, 382): <<Զենքը մի կույր գործիք է, որ հնազանդվում է խորամանկներին>> (2,382): <<Պորտը գրքերի մեջ է կտրվել>> (2, 388): Մեկ կամ մի քանի բառերի փոփոխությամբ. <<Ինձ ցաքի կրակի մեջ կդնի>> (2, 430), <<Ագռավը ագռավի լեզուն լավ կհասկանա>>(2, 375):

Փոխաբերության դրսևորումներից է փոխանունությունը: Այն միջոց է, որի դեպքում իրար հետ կապված առարկաներից մեկի անունը գործածվում է մյուսի փոխարեն: Հնարավոր են ամենատարբեր կապեր պարունակողի և պարունակյալի միջև, հեղինակի և նրա ստեղծագործության, հատկանիշի և առարկայի, երևույթի ձևի և բովանդակության, տեղի, վայրի և բնակիչների միջև:

Վ. Օվյանը ունի այնպիսի փոխանունություններ, որոնցով կարողանում է ընթերցողի ուշադրությունը գրավել այն հատկանիշի վրա, որը տվյալ պահին հետաքրքրում է իրեն:

«Լեռնակերտ» երկում փոխանունությունն ունի իր դրսևորումները.

1. Պարունակողը գործածվում է պարունակյալի փոխարեն. «Անտոնը դատարկում է հերթական թասը» (2.375): «Դատարկում է թասը» հասկացվում է թասի պարունակությունը:
2. Բնակավայրի, տեղի անունը գործածվում է այնտեղ ապրող մարդկանց անվան փոխարեն. «Փոթորկուն օրեր է ապրում մեր **Ղարաբաղը**»: (2.409), «Ամբողջ **Շուշին** չարժե Բարիշկայի մի մազին»: (2.400): «Այ անաստված, դո՞ւ ես **Լեռնակերտը** պահում, թե՞ **Լեռնակերտն** է քեզ պահում»: (2.375) Այստեղ ծաղրում է Գորոդովոյ Անտոնի՝ ոստիկանի արատավոր գործունեությունը:
3. Հատկանիշի անունը գործածվում է այդ հատկանիշն ունեցող առարկայի անվան փոխարեն, օրինակ՝ «Եվ Ղուկաս առաքյալը **սպիտակով սևին** գրեց…»: (2.415)
4. Գործողության անվան փոխարեն գործածվում է նրա արտաքին նշանը, միջոցը, արդյունքը: Օրինակ՝ «**Դեղնած ատամները ցուցադրեց** վարժապետ Սիմոնը»2.408: Դեղնած ատամները ցուցադրել, այսինքն՝ խնդալ: Գործողության անվանման փոխարեն գործածված է արտաքին նշանը:

Հեղինակը հաճախ անձնավորության, երևույթի փոխարեն գործածում է արտաքին որևէ նշան, հատկանիշ: Օրինակ՝ հեգնում է ժամկոչ Մանասի տգիտությունը. «Փորեց մի ժամ, երկու ժամ և հանկարծ գլխավերևում, լուսանցքից ներս ընկած լուսնի շողերի տակ նկատեց մի **դեղնագույն գանգ**»: (2.426) Կամ՝ Այսպես է ծաղրում «ապագա անկախ պետության արքային՝ Ապետնակ հորջոջվող պարոնին»: «Պարոն Ապետնակը հրաժարվեց գահից ու սեփական կամքով մառզերի փողը դրեց ճակատին և ցրիվ տվեց իր թագավորական **գլուխ**ը»: (2.381)

Վ. Օվյանի «Լեռնակերտ» երկում հանդիպում ենք սահմանափակ թվով համըմբռնման օրինակների: Համըմբռնումը արտահայտում է երևույթի,առարկայի անվան փոխարինումը նրա մի մասի անունով, հոգնակի թվի փոխարինումը եզակի թվով և ընդհակառակը: «Լեռնակերտ»՝ երկում հանդիպում ենք համըմբռնման հետևյալ տեսակների.

1. Եզակի թիվը գործածվում է հոգնակիի փոխարեն.

Օրինակ՝ «… Մարդը մեռնում և դառնում է որևէ միջատ՝ բզեզ, մորեխ, լու, փայտոջիլ…» (386) : «Ղարաբաղը օրենքով պատկանում է անգլիացուն»: (408), «Անգլիացին ազնիվ է, անգլիացին արյուն չի թափում»: (2.408)Կամ՝ «Բոստանում վարունգ չմնաց, պոմիդոր չմնաց»: (2.424)

2. Մասի անունը գործածվում է ամբողջի անվան փոխարեն: Օրինակ՝ «Իսկ թո էդ ճառից **փորս չկշտացավ**…»: (2.402) Այստեղ ծաղրում է մեծահարուստ վաճառականի որկրամոլությունը:

Մեծապատիվ վարժապետին հեգնում է այսպես. «… վարժապետ Սիմոն Սարխոշյանցն իր **ստամոքսի պահանջով** պտտվում էր Դուքան Մեդրակի տան շուրջը»: (2.401)

Այսպիսով՝ փոխաբերությունը իր տարբեր դրսևորումներով՝ փոխանունություն, համըմբռնում, հարստացնում է Վ. Օվյանի լեզվի ոճական միջոցների համակարգը, արտահայտում իմաստային նրբություններ, խորացնում արտահայտության իմաստը:

Գրականություն

1.Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն,Երևան,2000թ.:
2.Վ.Օվյան,Լեռների լեգենդը,Երևան,2006թ.:
3.Եզեկյան Լ. ,Ոճագիտություն,2006թ;
4. .Բաբայան Օ.Ե.,Փոխաբերությունը արդի հայերենում,Երևան,1998թ.:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Նունե Խաչատրյան -բ.գ.թ.,դոցենտ , ակ. Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
էլ. փոստ՝ Khachatryan-15@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը: